Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն ՈՂԱ/42-2022

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇԵՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԺԱՄԸ 16:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «STARMUS F VI. 50 ՏԱՐԻ ՄԱՐՍԻ ՎՐԱ» 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Հ. Արշակյան	ՀՀ ԱԺ-ի փոխնախագահ, հանձնաժողովի համանախագահ
Ա. Հարությունյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի համանախագահ
Լ. Նանուշյան	ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Լ. Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Ա. Խզմալյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Պ. Հովհաննիսյան	ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
Գ. Մանթաշյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Ն. Տերյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Տ. Հարությունյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ
Խ. Պողոսյան	ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ս. Հայոցյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ

Ա. Ամիրխանյան	ՀՀ ԱԺ-ի փոխնախագահ Հակոբ Արշակյանի օգնական
Ս. Հովհաննիսյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական
Ն. Մնացականյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական
Հ. Պողոսյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական
Ե. Սիմոնյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ղեկավարի տեղակալ
Գ. Ծառուկյան	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Հ. Մովսիսյան	«Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Մ. Գիգոյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության մշակութային միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ
Գ. Իսրայելյան	«STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի համահիմնադիր տնօրեն **(առցանց մասնակցությամբ)**
Մ. Սկոբլ	«STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի արտադրության կառավարիչ
Ե. Դանիեկինա	«STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի մենեջեր
Ս. Գյուրջինյան	«STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի գովազդային (PR) պատասխանատու
Ա. Մարտիրոսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար

«STARMUS F VI. 50 ՏԱՐԻ ՄԱՐՍԻ ՎՐԱ» 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Գարիկ Իսրայելյան, Մայքլ Սկոբ, Եկատերինա Դանեկինա, Սիրանուշ Գյուրջինյան, Արթուր Մարտիրոսյան, Արայիկ Հարությունյան)

1. Ընդունել ի գիտություն «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի համահիմնադիր տնօրեն Գարիկ Իսրայելյանի կողմից ներկայացված «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի հետևյալ ծրագրային նախագիծը՝

1) նախքան փառատոնի պաշտոնական մեկնարկը, 2022 թվականի օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում, նախատեսվում է «Ապրիկոտ Աղվերան Ռեզորթ» հյուրանոցային համալիրում կազմակերպել աստղալուսանկարչության դպրոցի օրեր՝ հայտնի դասախոսների ու բանախոսների մասնակցությամբ.

2) 2022 թվականի սեպտեմբերի 4-ին՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նախատեսվում է փառատոնի պաշտոնական բացման արարողություն (կազմակերպիչ՝ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ).

3) 2022 թվականի սեպտեմբերի 5-ին՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նախատեսվում է «Sonic Universe»-ի և Սթիվեն Հոքինգի շքանշանի հանձնման արարողություն՝ համերգային ծրագրով.

4) 2022 թվականի սեպտեմբերի 6-9-ը՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նախատեսվում է «Cosmos & Change the World» համաժողովի անցկացում՝ յուրաքանչյուր օր սկսած ժամը 15:00-ից, օրական ընդհանուր 3 ժամ տևողությամբ դասախոսություններ (յուրաքանչյուր դասախոսության տևողությունը՝ 20 րոպե)՝ 1-1.5 ժամ ընդմիջմամբ.

5) 2022 թվականի սեպտեմբերի 7-8-ը՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նախատեսվում է Տիեզերական տեխնոլոգիաների համաժողովի անցկացում.

6) 2022 թվականի սեպտեմբերի 7-ին՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում նախատեսվում է կազմակերպել «108 րոպե կլոր սեղան» ծրագիրը.

7) 2022 թվականի սեպտեմբերի 8-ին, երեկոյան ժամը 22:00-ից հետո Գառնիի հեթանոսական տաճարի տարածքում նախատեսվում է կազմակերպել «Star Party» միջոցառում, որի ընթացքում աստղադիտակներով դիտումները կուղեկցվեն երաժշտությամբ և հյուրասիրությամբ.

8) փակման արարողություն, որը նախատեսվում է կազմակերպել գալա ընթրիքի ձևաչափով, սակայն անցկացման վայրը և միջոցառման կազմակերպիչը դեռևս ընտրված չեն.

9) 2022 թվականի սեպտեմբերի 4-10-ը՝ Երևանի Ազատության հրապարակում նախատեսվում է կազմակերպել «STARMUS» գիտական ճամբար (StarmusScience Camp)՝ առնվազն գիտության 20 տարբեր ոլորտների ներկայացվածությամբ, որտեղ երեկոյան ժամը 21:00-ից հետո քաղաքացիների մուտքը կլինի ազատ: Այդ նպատակով հրապարակում կկառուցվի բեմ՝ երաժշտության, գրքերի ստորագրությունների և հայտնի գիտնականների ու դասախոսների հետ հանդիպումների, կարճ տևողությամբ դասախոսությունների, ուսանող-դասախոս-գիտնական կլոր սեղանների, այլ քննարկումների համար.

10) փառատոնի շրջանակներում նախատեսվում են միջոցառումներ նաև հանրակրթական հաստատություններում (դպրոցներում), այդ թվում՝ Գյումրիում և Դսեղում:

2. Առաջարկել «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի համահիմնադիր տնօրեն Գարիկ Իսրայելյանին՝

1) համագործակցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանի հետ՝ «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի միջոցառումների շրջանակներում տեղական գիտական հանրությանը ևս ներգրավելու համար.

2) «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի օտարերկրյա մասնակիցներին ՀՀ մուտքի արտոնագրերի տրամադրման հետ կապված խնդիրները, ըստ անհրաժեշտության և դեպքերի, քննարկել ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության համապատասխան ներկայացուցիչների հետ.

3) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար Արթուր Մարտիրոսյանի առաջարկությամբ՝

ա. միջազգային հայտնի լրատվամիջոցներով առավելագույնս լուսաբանել հայ գիտնական Ալեքսանդր Լևոնի Քեմուրջյանի մասին,

բ. միջոցառումների ծրագրում նախատեսել ակադեմիկոս Անդրեյ Դմիտրիի Սախարովին նվիրված դասախոսություններ և կլոր սեղաններ.

4) ՀՀ ԱԺ-ի փոխնախագահ Հակոբ Արշակյանի առաջարկությամբ՝

ա. ՀՀ-ի բարձրաստիճան պաշտոնյաների ևս հրավիրել փառատոնի կազմակերպչական աշխատանքների շրջանակներում կազմակերպվելիք ՀՀ-ում օտարերկրյա դեսպանների հետ հանդիպման միջոցառմանը,

բ. կազմակերպել հանդիպում հայկական մեծ ընկերությունների և Հայաստանում ներկայացված բարձր տեխնոլոգիական և ինժեներական ոլորտի օտարերկրյա կազմակերպությունների և ասոցիացիաների հետ, որին կմասնակցի նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ կազմակերպչական աշխատանքներին հնարավորինս ներառականություն ապահովելու և միջազգային լրացուցիչ հնչեղություն հաղորդելու նպատակով.

5) «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի հետ քննարկել «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի նկարահանման, բաց կապուղով ուղիղ հեռարձակմամբ եթերի ապահովման, միջազգային հեռուստաընկերություններին եթերի ազդանշան տրամադրելու, ինչպես նաև տեխնիկական հագեցվածության հետ կապված հարցերը:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար Արթուր Մարտիրոսյանին՝ համագործակցելով «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի կազմակերպիչների հետ՝

1) ՀՀ ԱԺ-ի փոխնախագահ Հակոբ Արշակյանի առաջարկությամբ՝

ա. սեղմ ժամկետում ձեռնարկել միջոցներ՝ փառատոնի տարբերանշանով կրծքանշանների պատրաստման և բաշխման ուղղությամբ, որպեսզի պետական պաշտոնական այցելությունների, հանդիպումների, գործուղումների ընթացքում ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների անդամները, ինչպես նաև պետական այլ այրեր կրեն և համապատասխանաբար առավելագույնս իրազեկեն ՀՀ-ում կազմակերպվելիք միջոցառման մասին,

բ. ՀՀ արտաքին գործերի նախարարության անմիջական միջնորդությամբ ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչություններին (դեսպաններին և հյուպատոս-ներին) և օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանություններին պաշտոնապես ներկայացնել «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի ծրագրի հրավիրատոմսերը և ծրագրի մանրամասները: Առանձնահատուկ ուշադրություն դարձ-նել հատկապես այն երկրներին, որտեղից ակնկալվում են բարձրաստիճան հյուրեր կամ պաշտոնական պատվիրակություններ,

գ. «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի կարևորագույն ծրագրերի լուսաբանման գործընթացում ապահովել օտար լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն և այլն) տեղեկատվության տարածումը՝ միջոցառման մասնակիցների թվաքանակն ավելացնելու և զբոսաշրջության ոլորտում գիտական տուրիզմի բաղադրիչը կայացնելու համար,

դ. ՀՀ ԱԺ-ի նախագահ, հանձնաժողովի համանախագահ Հակոբ Արշակյանի առաջարկությամբ՝ հանձնաժողովի անունից ուղարկել շրջաբերական ՀՀ կառավարության, ՀՀ ԱԺ-ի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գործընկերներին, որն իր մեջ կպարունակի միջոցառման ամբողջական ծրագիրը, և խնդրել, որ յուրաքանչյուրն իր մասով հանձնաժողովին ներկայացնի առաջարկներ՝ կապված միջազգային բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ միջոցառումների, կլոր սեղանների և նիստերի անցկացման հետ, որոնք կքննարկվեն հանձնաժողովի հաջորդ նիստի ընթացքում.

2) ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի առաջարկությամբ՝

ա. միջոցառման հանրայնացման գործընթացում առավելագույնս թիրախավորել ներկայումս ՀՀ-ում բնակվող օտարերկրացիներին (մասնավորապես՝ ՌԴ-ից ժամանած SS ոլորտի և բարձր տեխնոլոգիական ինժեներական ուղղությունների մասնագետ-ներին),

բ. քննարկել «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի կազմա-կերպիչներից պարբերաբար նյութեր ստանալու և դպրոցներին տրամադրելու մեխա-նիզմները, որպեսզի վերջիններս իրենց սոցիալական ցանցերի էջերում կամ կայքերում շաբաթական մի քանի անգամ տեղադրեն համապատասխան հրապարակումներ,

գ. համագործակցելով ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի համապատասխան պատասխանատուի հետ՝ ապահովել սփյուռքում գործող բոլոր կառույցների պատշաճ իրազեկումը՝ 2022 թվականի սեպտեմբերի 4-10-ը Հայաստանում «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի կազմակերպման և անցկացման մասին,

դ. «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի կազմակերպչական աշխատանքների համակարգման միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ներգրավել նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի համապատասխան ներկայացուցչին՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում տեղեկատվական կետեր, հյուրերի համար առանձին անցուղիներ նախատեսելու, ըստ չվերթների ժամանակացույցերի հյուրերի դիմավորումը (մասնավորապես՝ կամավորների կողմից նվերներով և ծաղկեփնջերով հյուրերին դիմավորելը) և ճանապարհումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար,

ե. համագործակցել նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանի հետ՝ համայնքներին առավելագույնս ներգրավելու համար:

4. ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանին՝

1) ԵՄ-ի դեսպանի և ԱՄՆ-ի փոխդեսպանի հետ կայանալիք հանդիպման շրջանակներում, «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի համահիմնադիր տնօրեն Գարիկ Իսրայելյանի հետ համատեղ, ներկայացնել նաև «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի մանրամասները.

2) համագործակցելով «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի համահիմնադիր տնօրեն Գարիկ Իսրայելյանի հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանի հետ քննարկել «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնին Իրանի գիտական հանրության մասնակցության հարցը.

3) հաշվի առնելով Հայաստանի կողմից ստանձնված Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի նախագահության փաստը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար Արթուր Մարտիրոսյանի և «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի համահիմնադիր տնօրեն

Գարիկ Իսրայելյանի հետ քննարկել փառատոնի լուսաբանման և միջազգային բարձրաստիճան պաշտոնյաների ներգրավվածության (օրինակ՝ ոլորտային նախարարներին հրավիրելու դեպքում) պարագայում լրացուցիչ թեմատիկ միջոցառում նախատեսելու կամ քննարկում կազմակերպելու հետ կապված հարցերը:

5. ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանին՝ ապահովել ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի, Հայաստանի տուրիստական օպերատորների և «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի գովազդային (PR) պատասխանատու Սիրանուշ Գյուրջինյանի համատեղ համագործակցությունը՝ «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնը լուսաբանող պրոմո-հոլովակների օգտագործմամբ կայանալիք միջոցառումը լայնորեն գովազդելու և զբոսաշրջիկներին դեպի Հայաստան ուղղորդելու համար:

6. Առաջարկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին՝ սահմանել հսկողություն՝ նախքան «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի մեկնարկը Երևան-Գառնի-Գեղարդ զբոսաշրջային երթուղու շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու և ճանապարհահատվածը պատշաճ կահավորելու նկատմամբ:

7. «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի կազմակերպչական աշխատանքների համակարգման միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին՝ յուրաքանչյուրն իր մասով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար Արթուր Մարտիրոսյանին ներկայացնել 300 անվճար հրավիրատոմսի բաշխման վերաբերյալ գրավոր առաջարկություններ՝ ըստ ուղղությունների, թվի և պաշտոնյայի ներկայացվածության մակարդակի:

8. Առաջարկել «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» փառատոնի գովազդային (PR) պատասխանատու Սիրանուշ Գյուրջինյանին՝

ա. «STARMUS F VI. 50 տարի Մարսի վրա» 6-րդ փառատոնի կարևորագույն ծրագրերի լուսաբանման գործընթացում սերտորեն համագործակցել Հայաստանի հանրային ռադիոյի ներկայացուցիչների հետ՝ օտար լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, թուրքերեն և այլն) եթերներ հեռարձակելու և միջոցառման նյութերը լուսաբանելու համար,

բ. համագործակցել նաև «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի և «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գոռ Ծառուկյանի հետ՝ տեղական լրատվամիջոցներին մեկ կենտրոնից (տելեգրամյան ալիքում տեղադրելու միջոցով) տեղեկատվությունը տրամադրելու, ինչպես նաև 15-30 վայրկյան տևողությամբ 3-4 պրոմո-հոլովակներ և ռեպորտաժներ նկարահանելու համար,

գ. սոցիալական և գովազդային այլ հոլովակների համար դիտարկել Երևան քաղաքի բոլոր հնարավորությունները («Զվարթնոց» միջազգային օդանավակայանի մուտքը, կրկեսի նոր շենքի LED էկրանը, գովազդային ծգապաստառներ և այլն),

դ. մշակութային բաղադրիչի շրջանակներում սերտորեն համագործակցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ